



# ՇՈՒՇԱԳԻՐ

Մենք, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավար Ք.Խաչատրյանը, 2012 թվականի հունիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքում հանդիպելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի միջև փոխհամագործակցության դրվածքը և նպատակ ունենալով ավելի ընդլայնել այդ գործակցությունն ու այն տարածել նաև կենսագործունեության նոր ոլորտներ, հաստատում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի միջև կրթամշակութային, սպորտի, զբոսաշրջության և հանգստի կազմակերպման, գյուղատնտեսության զարգացման, վարչարարության ոլորտում ձեռք բերած փորձի փոխանակման և կենսագործունեության մյուս բնագավառներում 2012 թվականի համար նախատեսված միջոցառումների ու փոխայցելությունների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի և հանձնարարում Արմավիրի մարզպետարանի և Շուշիի շրջանի վարչակազմի պատասխանատուներին՝ կոնկրետ կազմակերպչական աշխատանքներ իրականացնել ժամանակացույցում ընդգրկված միջոցառումները կյանքի կոչելու համար:

Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ

  
Ա.Ղահրամանյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Շուշիի շրջանի  
վարչակազմի ղեկավար



Ք.Խաչատրյան